ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՄՇ-70

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՄԻՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՀ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան « 02 » « 02 » 2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Տրամադրող) մի կողմից և «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղը, ի դեմս հաստատության տնօրեն Մ. Սարգսյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Ընդունող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Տրամադրողը «1091. Հանրային իրազեկում» ծրագրի «12001. «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ մասնաբաժնի վճար» միջոցառման շրջանակում տրամադրում է «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ մասնաբաժնի վճարը Ընդունողին, իսկ վերջինս ընդունում է այն:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն համաձայնագրով Տրամադրողը պարտավորվում է վճարել «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ մասնաբաժինը, որը 2022 թվականի համար կազմում է մինչև 233 590.5 հազար (երկու հարյուր երեսուներեք միլիոն հինգ հարյուր իննսուն հազար հինգ հարյուր) դրամ:

2.2 Տրամադրողը տրամադրված միջոցները վճարում է Ընդունողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ համաձայն ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի (հավելված N 1):

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Ընդունողը պետք է ապահովի սույն համաձայնագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն համաձայնագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն համաձայնագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Ընդունողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

4.2 Սույն համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից (ներառյալ հավելվածը), կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տրամադրող՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011034007

ՀՎՀՀ 02698732

Տրամադրողի ստորագրությունը

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

Վ. Գասպարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Ընդունող՝

«Միր» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ

ք. Երևան, 0023, Արշակունյաց 4

«Արարատ բանկ» ԲԲԸ

Հ/Հ 1510032099890100

ՀՎՀՀ 01505813, Հեռ.՝ 091 40 75 61

Ընդունողի ստորագրությունը

Տնօրեն՝

Մ. Սարգսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
« 02 » « 02 » 2022 թ. N 70 համաձայնագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

զմակերպության անվանումը՝ «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ

ջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ծրագիր 1091	Միջոցառում 12001	«Միր» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ մասնաբաժնի վճար												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների /աճողական/												ԸՆԴԱՄԵՆԸ
		I եռամսյակ			I կիսամյակ			9 ամիս			տարի			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային զմակերպություններին	4621	0.0	29198.8	**58397.6**	77863.5	97329.4	**116795.3**	**136261.2**	155727.0	**175192.9**	194658.8	214124.6	**233590.5**	**233590.5**
Ընդամենը		0.0	29198.8	**58397.6**	77863.5	97329.4	**116795.3**	136261.2	155727.0	**175192.9**	194658.8	214124.6	**233590.5**	**233590.5**

ՏՐԱՄԱԴՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011034007
ՀՎՀՀ 02698732
Տրամադրողի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝
_____ Վ. Գասպարյան
Կ.Տ.

ԸՆԴՈՒՆՈՂ՝
«Միր» միջպետական հեռուստառադիոընկերության Հայաստանի Հանրապետության ազգային մասնաճյուղ
ք. Երևան, Կոմիտասի 0023, Արշակունյաց 2ա «Արարատ բանկ» ԲԲԸ
ՀՀ 1510032099890100
ՀՎՀՀ 01505813
Հեռ. 010 58 52 69
Ընդունողի ստորագրությունը
Տնօրեն՝
_____ Մ. Սարգսյան
Կ.Տ.